

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խաղաղաստան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.

Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բայ է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են

խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՅՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1898 ԹԱՎԱՆԻ

ՄՇԱԿ

(26-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՓԵՏՐՎԱՐԻՑ «ՄՇԱԿ» ՀՐԱՏԱՐԱՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ ԲԱՅԻ ՏՕՆ ԵՒ ՏՕՆԵՐԻՆ ՅԱՋՈՐԴ
ՕՐԵՐԻՑ

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տաճար և
մէկ և տաճար ամսականը՝ 9 ռ., ինչ և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6
ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի
ամսականը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է ԽՐԱՎԱՐԱՏԱՆԸ (Բաղարայան և Բարսեղյան փողոցների անկիւն):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներէ «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, редакция «МШАКЪ», իսկ
արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Ցայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով:
Բառեր վճարվում է 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹԻՒՆ

Տխուր տեսարան. — ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Փշնամին չէ ոչնչացել. Նամակ Գանձակից. Նա-
մակ Արդիւնից. Նամակ Խմբագրութեան. Ներ-
քին լուրեր. — ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Այգլա-
նը բաւական չէ. Նամակ Պարսկաստանից. Ար-
տաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՆՈՒԳԻՐ-
ՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱ-
ՆԱՍԻՐԱՎԱՆ. ԲՅՈՒՆ ԳՐԱՅԻՆԵՐ.

ՏԵՍՈՒ ՏԵՍԱՐԱՆ

Ոչ մի երկիր այնքան քաղաքական սխալ-
ներ չէ արել և այնքան անգամ չէ խա-
վել, ինչպէս Պրանսիան: Նրա մեծ հասա-
րակական շարժումները յաճախ վերջացել
են անաջողութեամբ և այն, ինչի համար
կախ են մղել Ֆրանսիական մեծ ազգի
հոգեւոր գործողները տասնեակ տարի-
ներ ընթացքով, դարձեալ ունակոյն և
եղել և անարգելի: Իրէիֆուս — Ջօլայի
նշանաւոր դատը շատ ծանր տպաւորու-
թիւն թողեց բոլոր այն անձանց վրա, ո-
րոնց համար թանգ են լուսաւոր Պրան-
սիայի մշակած հասարակական սկզբունք-
ները: Բոլոր այն Ֆրանսիացիները, որոնք
ընդունակութիւն ունեն խելք չը կորցնե-
լու, երբ լսում են լեզուի զօրքը աղա-
ղակները, անկեղծ կերպով ցաւում են ի-

րանց հայրենիքի ներկայ դրութեան մա-
սին: Նրանք տեսնում են, որ ճշմարտու-
թիւնը կարող է ազատ Պրանսիայում մնալ
վարարութեամբ և որ ոչ ժողովուրդը,
ոչ ազգային ժողովը, ոչ երկուեւեալ
դատարանը ընդունակ չեն ներկայումս
ինքնուրոյն գործել, այլ հպատակում են
այն նշանին, որ տալիս է զինուորական մի-
նիստրութիւնը, որ թելադրում է մի գե-
ներալ Բուադէօֆը:

Ռուսաց «Неделя» շաբաթաթերթը իր
վերջին համարում գետնել է մի անսովոր
ընդարձակ աւազանորդ ֆրանսիական հան-
րապետութեան ներկայ բարոյական վիճակի
մասին և գալիս է այն խիտը եզրակացու-
թեան, որ լուսաւոր մարդկութեան դա-
ւանած սկզբունքները Պրանսիայում խա-
տառակվել են: Անհատը, մարդկային անձնա-
կորուցիւնը չէ ապահովում հասարակա-
կան զանազան պատահարներից և անկա-
րող է մաքառել զրպարտութեան և ա-
նարար դատապարտութեան դէմ: Արդա-
րեւ, ո՞վ պէտք է պաշտպան հանդիսանայ
ոստակոյն եղած սկզբունքներին և վր-
նասոված անձնաւորութիւններին: Արդեօք
ընդհանուր ձայն առնու է թիւն և ը:
Սակայն նրա հետեւները արդէն կարելի է
նախագուշակել, թէ և ընտրութիւններ չեն

կատարվել: Արդեօք ազգային ընտրողա-
կան ժողովը, պարլամէնտը: Մենք ար-
դէն տեսնեմք, որ պարլամէնտը ոչ միայն
չը դիմադրեց հրապարակական դատաւա-
րութեան և արդարութեան, այլ և որո-
շեց տպադրել և տարածել ամբողջ Պրան-
սիայում կառավարութեան ճառը, որի մէջ
փառաբանված էին միլիտարիզմը և կամա-
յականութիւնը ու ծաղրված էին ընտրեալ
մտածողները: Արդեօք դուք ազատա-
վարութիւնը: Սակայն նա գործադրում
է միայն այն ժամանակ, երբ նա հարկա-
ւոր է իշխանութիւն ունեցողներին և մի
կողմ է դրվում, երբ չէ կարող ձեռնու-
ղիւն: Գուցէ երկուեւեալներ զատա-
րաւր: Սակայն նա ճանաչում է միայն
այն վիճակներին, որոնց վրա շատ չբանջա-
նեք և տեսնում: Գուցէ մի մոլորի ազա-
տութիւնը: Սակայն նա վարակած գո-
յութեան կուր մըցումով, մտածում է
միայն այն բանի մասին, որ հաճոյանայ ամ-
բոյնին: Արդեօք խօսքի ազատութիւնը:
Սակայն նա արտայայտվեց միայն այն
բանի մէջ, որ թեք անկախ մտածող-
ների վրա («Consueze Zola») և փա-
ռաբանեց միլիտարիզմի անսխալականու-
թիւնը: Կամ գուցէ ապահովութիւնը
Օրլէանսի երկրի մէջ է: Բայց Օրլէանի
իշխանը սեղմեց անկայանի բաղադրեղ-
ւոր ձեւը: Արդեօք եկեղեցին: Բայց
կաթօղիկ հոգեւորականութիւնը միացած
էր արդարութեան և ազատ դատաւա-
րութեան հակառակորդների հետ: Ար-
դեօք զօրքը: Սակայն նա սկսել է
վերադրել իրան անսխալականութեան պա-
տիւ և իշխել դատարանի և պարլամէնտի
վրա զինուորի բերանով: Գուցէ վերջապէս
փողը, կապիտալը: Սակայն սրանց ա-
նունը այնքան կտորված է, որ նրանց ներ-
կայութեան կասկածն անգամ կարող է
խայտառակել ամեն մի արդար գործ:
Աւերմի, որտեղ են այն հիմնարկութիւն-
ները, որոնք պէտք է ապահովէին արդա-
րութիւնը և անհատի իրաւունքները և
հասարակական կեանքի հիմնական սկզբ-
ունքները: Ոչինչ չէ երևում: Նրանք չը
կան: Եւ հազիւ մի գրողի թղթ ձայն է
լիշեցնում մեզ անմահ իդէալի մասին:

Տխուր է տեսարանը:

Այժմեան դիտութիւնը եկել է այն եզրակա-
ցութեան, որ արեւելահայկերէն մի նեարդային հի-
ւանդութիւն է, որ ժառանգաբար անցնում է
որդոց-որդի: այս հայեացքը ապացոյց է գտնում
թէ ուղեղի հիւանդական դրութեան մէջ, որի վրա
մատնանիլ են արել մի շարք հեղինակաւոր հե-
տազոտողներ և թէ այն այլասեւուման մէջ, որ
նկատվում է արեւելահայկերի սերունդի մէջ, ինչ-
պէս նաև այն հանդամանքի մէջ, որ յաճախ ար-
եւելահայկերը անկարող են լինում դիմադրել իրանց
մարդկեան:

Դարեր ընթացքում դիտնականները և բանի-
մայ մարդիկ աշխատել են մաքառել այս ընդ-
հանրացած անտի դէմ, հասկացած լինելով նրա
աւերիչ ազդեցութիւնը մարդկութեան վրա, ֆի-
զիկական և բարոյական տեսակէտից: Դեռ 1116
տարի Գր. առաջ Զինատանում մի հրաման
գտնուեց, որով մահվան պատժի էին են-
թարկվում արեւելահայերը: Կան ցուցմունքներ այն
մասին, որ ամենահին ժամանակներում հնդկ-
ները և եգիպտացիները լաւ ծանօթ էին սպիւր-
տին: Հնդկաստանում գործ էին ածվում սօժա
և սօժու անունով արեւելահայ խմիչքները, ո-
րոնք պատրաստվում էին բոյսերից և հացահա-
տիկներից: Յունաստանում արեւելահայերը
նոյնպէս տարածված էր, չը նայելով Լիկուրգոսի
և Սօլոնի խիտ օրէնքներին: Սպարտայում հրա-
պարակով արեւելահայ էին ձորակներ, որ ցոյց
տան հասարակութեանը այս անտի վատ հետե-
ւանքները, բայց սինչ չէր օգնում: Գարեջուրը
երկրի մի շատ ընդհանրացած խմիչք էր հնում:
Փսենֆօնտը յիշատակում է, որ հայոց երկրում

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՇՆԱՄԻՆ ԶԷ ՈՉՆԱՅՆԻ

Նորից դարձուրել վտանգը գլուխ է բարձ-
րացնում: Ժամատարը հասնել է Ջեզդա, այդ ի-
րողութիւնը պաշտօնապէս էլ հաստատված է:
Ջեզդան մահմեդական աշխարհի համար անա-
դին նշանակութիւն ունի. աշխարհի բոլոր կող-
մերից Արաբիայի այդ ծովափնեայ քաղաքն են
հաւաքվում հազարաւոր ուղղահաւատները, ո-
րոնք ուխտ են դնում Մէքքա: Կատարելով իւ-
րաքանչիւր մտաւորման համար նուիրական այդ
պարտը, նրանք Ջեզդայից էլ ցրվում են աշ-
խարհի զանազան կողմերը: Պարզ է թէ որպիսի
հեշտութեամբ նրանք կարող են տարածել արա-
բական համաճարակը: Իր բուն հայրենիքում են
Բոմբէյում, ժամատարը չէ դադարել: Ընդհակա-
ռակը, վերջին ժամանակները նա յանկարծ
սաստկացաւ: Եւ այսպէս, նա մի կողմից հաս-
տատվում է իր օջախում, իսկ միւս կողմից արդէն
վարակման մի տեղ է հաստատել Արաբիայի ա-
փերում:

Վտանգը դարձեալ ահաւոր է, ինչպէս մի
տարի առաջ, երբ ամենքը սպասում էին հնդ-
կական անուղիչ հիւրին: Այն ժամանակ շատ
տեղերում մարդիկ թողնել իրանց սովորական
անհոգութիւնը և սկսեցին պատրաստվել: Պատ-
րաստվել ոչ թէ առատ զինք տալու թշնամուն,
համարելով նրան հակառակորդական մի անխու-
սափելի պատիժ, որ երկինքը ուղարկում է
մարդկանց մեղքերի համար... Ոչ: Անցել են
այդ ժամանակները, այլ ևս չեն վերադառնալ
միամտութեան և խաւարի այն ժամանակները,
երբ մարդը հաւատում էր հրաշքներին: Այժմ
պատրաստվել—նշանակում է կուռել, նշանա-
կում է առել թշնամու բերանից զոհեր խել:
Այդ մտքով էլ պատրաստվում էին: Նոյն իսկ
մեզ մօտ, չը նայած մեր յետամնացութեան,
մեզ պաշարող հին մեղքերին, որոնք դեռ շատ
հեռու են պահում մեզ հասարակական շահերից,
մի քանի միջոցներ ծրարվել են: Այսպէս,
Թիֆլիսի դռնայում ճառեր արտասանվելին,
Բագուի սէջ պատրաստութիւններ տեսնելին,
երբ ամբոյսը, սարսափած հեռուից եկող լուրե-
րից, սկսեց փախչել: Մեր միւս գաւառական
քաղաքները կամ շարունակեցին իրանց քաղցր
քունը, կամ մի քիչ սթափվելին, մի քանի
խօսք տեսցին, մի քանի միջոցներ դառն, ո-
րոնց պէտք էր ձեռնարկել, երբ ժամատար

Եվէյցաբեյում .	3	45	1
Խաղաղում .	14	09	95

Այստեղից երևում է, որ Պրանսիան առաջին
տեղն է սպիրտի գործածութեան տեսակէտից,
իսկ Ռուսաստանը—վեցերորդը, այն ինչ յայտնի
է, որ այս վերջին պետութեան մէջ արեւելահայերի
թիւը շատ գերազանց է: Այս հանգամանքը բա-
ցատրվում է նախ Ռուսաստանի օղի մէջ եղած
անառողջ խառնուրդով և երկրորդ, ուսումն
առաւանջատկութեամբ—լամել մինչև կատա-
րեալ արեւելութիւն, և խաղ շափում: Երկր այդ-
տեղ պակաս դեր չէ խաղում և ընդհանուր բա-
րեկեցութիւնը (անուղղ, բնակարանը), որը
պէտք է մեղմացնէ սպիրտի վնասակար ազդե-
ցութիւնը:

Ռուսաստանի զանազան նահանգներում սպիր-
տի քանակութիւնը անհատի վերաբերմամբ շատ
տարբեր է: Այսպէս, մայրաքաղաքներում մի ան-
ձին ընկնում է 3/4 վեդրո սպիրտ, իսկ նահանգ-
ներում—1/3 վեդրոյից մինչև 1/6 վեդրո: Սպիրտի
չափաւոր գործածութիւնը, ինչպէս նկատում է
պրօֆ. Նանուլ, չէ կարող երբեք այնքան վնա-
սակար լինել, ինչպէս իսկական հարեւր: «Ժողո-
վարը կարող է շատ խմիչք կանել, բայց մի-
այն եթէ այդ քանակութիւնը հաւասարադա-
րաւանված է օրերի վրա և խմված է չափաւոր
կերպով: Այդ դէպքում սպիրտի վնասը մեծ չէ.
ընդհակառակը, երբ անհասարակ կերպով է գործ-
ածվում նա, մինչև անգամ աւելի վնչ քանակու-
թեամբ, նա արդէն մի մեծ չարիք է դառնում»:

Ժառանգականութիւնը, ինչպէս ասացինք, մեծ

անհատ սպիրտի դարձուր. զին.			
Պրանսիայում .	747	242	94
Դանիայում .	642	33	1
Բելգիայում .	445	187	3
Գերմանիայում .	444	108	6
Աւստրիայում .	443	33	22
Ռուսաստանում .	343	46	3

հերս կը մտնէր: Բայց ժամատարը, բարեբախտաբար, չեկաւ: Եւ ահա ամեն ինչ մոռացվեց, ամեն ինչ մատուցեց սովորական անշարժութեան և անտարբերութեան:

Բայց թշնամին չէ ոչնչացել: Յայտնվելով Ձէղզայի մէջ, նա դարձեալ սպառնում է. նա կարող է յարձակվել այս կամ այն երկրի վրա ոչ թէ Արաբիայի կողմից, այլ մի ուրիշ տեղից, ուր նրան չէին էլ սպասում: Մարդիկ դեռ չեն գտել մի միջոց, որով կարելի լինի ահագին պատ քաշել նրա առաջ, սահմանափակել նրան մի տեղում: Մինչև այժմ մարդու խնայածը միայն կուրծքն է, յամառ, անողորմ կուր դէմ առ դէմ, այն ժամանակ, երբ թշնամին իր հիւրը կը լինի: Բայց ո՞ր է այդ կուրծքը. կոյ նա, պատ-րաստ է մեզ մօտ հարկաւոր ժամին բռնկվելու իր ամբողջ փրկարար ոյժով:

Թող ամեն մէկը փորձէ պատասխանել այս հարցին: Թող ամեն մէկը նայէ իրան և ասէ. արեւօք պատրաստ է...

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Մարտի 8-ին

Գանձակի Ս. Յովհաննէս մայր եկեղեցում ծխականները, անցեալ 1897 թվ. վերջին ամիս-ներէից սկսած մինչև այժմ քանի քանի անգամ ժողովել են երէցօրիկ ընտրութիւններ կատարելու, բայց, տարաբաղդաբար, ոչ մի անգամ աշտուղթիւն չունեցան: Առաջին անգամ ընտրու-ցին Գ. Սահակեանցին, սա հրաժարվեց. միւս անգամ ընտրեցին Յ. Լիսիկեանցին, սա էլ առաջին օրինակին հետեց, իսկ մի քանիսը չէնց տեղտեղտեղ, ժողովում, հրաժարվեցին: Երէցօրիկ Նանասեանց, որի ժամանակը լրացած է լինում, ուրիշ յորդորամբ, որ, ի հարկէ, ան-նպատակ չէր, իր հրաժարականը մի յայտարար-ութեան հետ ներկայացնում է հոգևոր կառավար-ութեանը և խնդրում է, որ վերջինս կարգա-դրէ նրանից եկեղեցապատկան դռները և դուր-ծեր տանալու և ուրիշին յանձնելու: Հոգևոր կառավարութեան տնօրէնութեան համաձայն՝ պ. Նանասեանց իր պաշտօնը և բոլոր գործերը յանձնում է Ս. Յովհաննէս եկեղեցու քահանայ Թուամեանցին: Թէ ինչպէս է կատարվում սը-րանց մէջ ստանալու ու յանձնելը, այդ մասին առ այժմ պահում ենք լուսթիւն... Հոգևոր իշ-խանութիւնը դարձեալ ծխականներին ժողով է հրաւիրում և երէցօրիկ ընտրութեան մի նոր փորձ փորձում: Այս անգամ ընտրում են պ. Բ. Ստեփանեանցին. սա էլ է հրաժարվում: Վեր-ջապէս այսօր, ամարտի 8-ին, կիրակի, նորից էլ ընտրում են նորից պ. Սահակեանցին, որ ներկայ չէր ծխականների ժողովին և երբ իմանում է այս ընտրութեան մասին, յայտնում է, որ չէ ընդունում: Տեսնում էք, ընթերցողներ, որ Ս. Յովհաննէս մայր եկեղեցու ծխականներից ոչ ոք չէ յանձն առնում երէցօրիկ պաշտօնը: Այս եր-բուցիլը Գանձակում, որ գոյութեան օրից մինչև այժմ, առաջին երեւոյթն է: Այս էր պակաս, այս էլ տեսանք: Ինչ է սրա պատճառը: Ահա մի հարց, որ պտտում է այստեղ, այնտեղ: Միթէ ընտրվածները իրանց համապատասխան չեն գտնում այդ պաշտօնին: Ո՛չ, քաւ լիցի: Որքան

դեր է խաղում արեւեցողութեան տարածման մէջ: Արեւեցողների 50%-80% ժառանգական հիւանդներ են: Կրօնքրիկ կարծիքով 100 արեւեցո-ղից 60-ը ժառանգական են, 25-ի արեւեցողու-թեան պատճառը հոգեկան դրութիւնն է և ֆի-զիկական հիւանդութիւնները, իսկ 10-ը հար-բում են արտաքին անդադատ պայմանների չը-նորհիւ, և միայն հիւրը անպատ պատճառներից: Այսպէս, ժառանգականութիւնը արեւեցողութեան ամենամեծ և ամենատարածված պատճառը պէտք է համարել: Այդ չէ նշանակում, որ արեւեցողի հայրը անպատճառ արեւեցող է եղել: Ժառան-գութիւնը կարող է լինել նաև պապերից և բա-ցի այդ ծնողների շատ տեսակ հոգեկան հիւան-դութիւնները անցնում են սերունդներին, փոխ-վելով արեւեցողութեան մղողներ: Փրանսիական բժիշկները մատնանշել են անում այն տիպի հանգամանքի վրա, որ ծնողները շատ յաճախ, երեխային կազդուրելու նպատակով, ուղ-ղակի արեւեցողութեան են ընտելացնում նրան և այդպիսի դէպքերում սակաւ չէ արեւեցող երե-խաների թիւը: Զարիստաններին արեւեցողութեան հասցնող ֆակտորները այնքան բազմաթիւ են, որ անկարելի է բոլորը մի առ մի թուել այս-տեղ. հասարակական կենսի բարդանալը, կենս-քի կուրծք, անաշտութիւնը, որը մարդուն յա-ճախ յուսահատութեան է հասցնում, ընտանեկան և մասնաւոր անբարոյութիւնը, մի քանի ար-հեստներ, վերջապէս ֆիզիկական մի քանի հի-ւանդութիւններ—այս բոլորը մղում է թոյլերին և երկնաշունչին (որոնք մեր այժմեան հասարա-

չէ որ նրանք, զրգված իրանց համեստութիւնից, այդպէս դատեն, դարձեալ ամենայն իրաւամբ և արդարութեամբ պէտք է խոստովանեն, որ նրանք անհամեմատ առաջինից բարձր և յար-մար կը լինեն այդ պաշտօնի համար: Ումանք այսպէս են բացատրում այդ բանը, թէ ի նկա-տի ունենալով այստեղի հոգևոր իշխանութեան անհոգութիւնը և անտարբերութիւնը դէպի հո-գևոր գործերը, երէցօրիկացուներից ոմանք վտառ չեն, որ պաշտօնակատար հոգևոր հայ-րերի հետ կանոնաւոր և արդիւնաւէտ գործ մի կարող լինեն կատարել, ուստի և խոյս են տա-լիս: Եւ այդպէս եկեղեցին մինչև հիմա մնում է առանց երէցօրիկի: Թէ իրերի այսպիսի անպա-տեն դրութիւնը ուր կարող է հասնել գործը, թողնում ենք ուրիշների բացատրութեանը:

Փ.

ՆԱՄԱԿ ԱՐՎԻԻՆԻՑ

Մարտի 5-ին

Ինչպէս յայտնի է, Բաթումի և Կարսի նա-հանքներում դեռ ևս դոյութիւն ունեն թրքական ժամանակից մնացած «ժողովրդական դատարան-ներ», որոնք քննում են տեղացիների մէջ ծագած բոլոր առևտրական, կարւածական, ընտանեկան և առհասարակ բոլոր ոչ-թրքական վէճերն ու դատե-րը: Մեր գաւառում այդպիսի 3 դատարան կայ-մէին Արդվիւնում, միւսն Արդանուշում և երրորդ-ը Շալվէթում: Մինչև այժմ այս դատարանների անդամները ընտրվում էին իրանց տեղում, իսկ այժմ նոր կարգադրութիւն է եղել: Թէ Շալվէ-թից և թէ Արդանուշի վիճակից ամեն մի գիւ-ղական հասարակութիւն մի մի պատգամաւոր է նշանակում, որոնք անձամբ պիտի գան Արդ-վին: Եւ արդարեւ պիտի գան դատարանների պատգամաւորները՝ գաւառապետի նախագահու-թեան տակ ժողով գումարելով՝ քուէները մեծա-մասնութեամբ պիտի ընտրեն իրանց դատարա-նի համար 3 անդամ, որոնցից 2 մասնակցական և 1 թրքաւորն (որովհետև մասնակցական բնա-կիչները թուով աւելի են թրքաւորներից): Բա-ցի այդ 3 անդամից, դատարանն ունի նաև կա-զմի՝ յատկապէս մասնակցական շարքի մի վերա-բերեալ խնդիրների համար. իսկ նախագահու-թեան պաշտօնը վարում են գաւառապետը (OR-ՐՈՅՈՒՆԻ ՆԱԿԱԼԻՆԻ) Արդվիւնում և վիճակապետ-ները (ՄԱՏՈՒՆԻՆԻ ՆԱԿԱԼԻՆԻ) Արդանուշում և Շալվէթում: Մարտի 27-ին նշանակված են նոր ընտրութիւններ գաւառի բոլոր դատարան-ների համար. ուստի այս միջոցին ամբողջ ժո-ղովուրդը, թէ հայ և թէ թուրք, լարված ուշա-դրութեամբ սպասում է ընտրութիւնների ար-դիւնքին: Եւ իրօք, ժողովուրդի համար կենսական նշանակութիւն ունեն այդ դատարանները, որ-ոնց մէջ շատ բան վճռվում է կամ պէտք է որ վճռվի խոջի թեղադրութեան համաձայն և տե-ղական ազաւթների, սովորութիւնների հիման վրա:

Գատարանի անդամներից պահանջվում է գլխավորապէս, որ նրանք մաքուր անցեալ ու-նենան և իրանց անարատ բարոյականով և անձ-նական արժանիքով կարող լինեն թէ յարգանք ազդել և թէ վստահութիւն գրաւել: Հարկաւոր կուլիան մէջ մեծամասնութիւն են կազմում) դէպի արեւեցողութիւնը, որի մէջ նրանք մոռա-ցութիւն են որոնում... Կայ արեւեցողութեան զարգացման մի ուրիշ պատճառ, որ չսովորանց ընդհանրացած է—այն է՝ ուսուցից առաջ մի թաս արդդ գցել: Սկզբում այդ անվան է գու-ցէ հանաքի համար, յետոյ ստամոքսը ընտելա-նում է, և օղին դառնում է մի անհրաժեշտ խմիչ և արտաքին բանալու համար: Մի քիչ յե-տոյ մի թասը բաւականաչափ չէ գրգռում ստա-մոքսը և չէ բացում ակտիւնը, հարկ է լինում մէկը երկու չինել, օրկայ ընթացքում երկու, երեք անգամ կրկնել այդ դոզը: Այնուհետև սպիրտը կազմուածքի համար մի պահանջ է դառնում, մանաւանդ եթէ այդ անձն արդէն տրամադրված է հարեւու, առանց արդի նա թուլանում է, անցնողունակ է դառնում գործելու և—օրգանիզմը թունաւորված է:

Սպիրտը, մեր բոլոր խմիչքների ազդիչ մա-սը, որը մենք ընդունում ենք օդի, գինու, զարեյրի և ուրիշ ձևերով, չափաւոր քանակու-թեանով կարող է մինչև անգամ օգտուել լինել մեզ՝ թէ մեզմ կերպով գրգռելով մեր ստամոքսը և արագացնելով մարտողութիւնը, և թէ բարձ-րացնելով մեր նեարդային համակարգութեան ոյժը և նրա միջոցով արագացնելով մեր օրգան-ների գործունէութիւնը: Գինին, օղին քիչ քա-նակութիւնով մի առանձին գուարթութիւն են լցնում մեր մարմնի մէջ: Այս պատճառով արեւ-օջուր տրվում է ընկճեցող հիւանդութիւնների

կնք համարում ընտրողների առանձնակի ու-շադրութիւնը: Նրաւորել այս հանգամանքը վրա, մանաւանդ այն պատճառով, որ, ինչպէս լսում ենք, ջանքեր են լինում Արդանուշի դատարանի համար այնպիսի անձեր ընտրել տալ, որոնք յայտնի են իրանց վատ կողմերով և որոնցից մէկը՝ մի թիւրք կեղծ-բէկ, սրանից առաջ ար-տաքսված է եղել նոյն պաշտօնից իր կաշա-ռակերութեան պատճառով: Առհասարակ այս վերջին ամիսներում մի ընդհանուր ժողովր-դական յուզում է տիրում Արդանուշում, չնորհի-մի պաշտօնեայի, պ. Ա-ի կողմի վարմունքի: Մենք առ այժմ ոչինչ չենք գրի այդ պարտի գործերի մասին, բայց չենք կարող չը պարզել երկու կէտ, որոնք կարևոր հասարակական նշա-նակութիւն ունեն: Նախ՝ երբ պ. Ա-ի նման անձեր դժգոհութիւն են յարուցանում իրանց դէմ, դիցուք մասնակցականների շրջանի մէջ, այդ անձերն իսկույն դիմում են թրքաւորների օգ-նութեան, որպէս զի այս վերջինների հանրա-գրութիւններով ի դերս հանել տան առաջիննե-րի ներկայացրած դանդաղը: Իսկ երբ թրքաւոր-ներն են անբաւականութեան ձայն լարձ-րացնում, անմիջապէս մի և նոյն մեղադրվածի ազդեանքը մտնում են մասնակցականների մէջ և նրանցից ստորագրութիւններ խլում թրքա-ւորների բողոքի դէմ: Հարկաւոր է միթէ բացատրել, թէ ինչ աստիճան վնասակար է այս վարմունքը. որ և է գործի մէջ մեղադրված պաշտօնեան իր դիրքը պահպանել կարենալու համար՝ արհեստական կերպով շարունակ գի-նում է ժողովուրդի մի մասը միւս մասի դէմ և այդ կերպով իր գործը առաջ տանում, իր անձ-նական օգուտի համար... Երկրորդ՝ երբ տեղի է ունենում որ և է յուզում մի գիւղական հասա-րակութեան մէջ, ասենք այս կամ այն կառա-վարչական պաշտօնեայի դէմ, իսկույն աշխատում են դանաղան գրգռել նրան ինքնապաշտում և սրանց պատժելու ջանքը, փոխանակ յուզումի առիթ տուող պատճառները հեռացնելու, ճիշդ այնպէս, ինչպէս գաւառական խոյլ անկուրծնում, երբ որ և է դեղման մասին լուր է երևում լրա-գրութեան մէջ, աշխատում են լուրը հաղորդող թղթակցին գտնել, որպէս զի նրան պատճեն... Եթէ հարկաւոր էք համարում պատժել, պարտ-նեք, պատժեցեք, եթէ կարող էք, ամբողջ հասա-րակութիւնը, որ իր կառույցի գանգատներն է ներկայացնում, օրինաւոր կերպով ու վճարում հարկն է, և ոչ թէ այն 2—3 անձերին, որոնց ընտրել է իրեն իր ցաւերի թարգման, այդ մի և նոյն հասարակութիւնը: Մեր նկարագրած այս երկու կէտերն էլ այժմ իրողութիւն են ներկա-յացնում Արդանուշի համար:

Աւելացնելով այս վիճակի վրա նաև այն հան-գամանքը, որի մասին մի քանի անգամ արդէն գրվել է: Պատի բացակայութեան պատճառով Արդանուշում—Արդանուշի և Շալվէթի ընտելի-չներին ուղղված նամակները և լրագիրները չա-բախտութեամբ մնում են այստեղի պոստաման մէջ. այդ կերպով տառնակ հազարաւոր ժողովուրդ իր չրջապատող աշխարհի հետ կանոնաւոր թղ-թատարական յարաբերութիւնից կտրված, կղզի-ացած է մնում: Երկրորդ պոլիտիկական ծառա-յողների հոգը չէ այս անհաւատարմ հանգամանքը,

ժամանակ, կամ առողջացողներին: Երբեմն ար-հօժօր ուղևորութիւն է ներքնում բանաստեղծ-ներին, վառում է նրանց երեւակայութիւնը, բայց նրա այս գործութիւնը արդէն պէտք է վնասա-կար և հիւանդական համարել: Մի բան կայ, որը երբեք չը պէտք է մոռանալ, այն, որ սովոր-աւ բոլորովին հարկաւոր չէ մեր մարմնի առող-ջութեան համար: Արհօժօր աղբեցողութիւնը, ինչ-պէս տեսնել, բացատրվում է նրանով, որ նա ամբողջովին, կամ նրա լուծման մասերը անց-նում են արեան մէջ և նրա հետ միասին շրջում են մեր մարմնի բոլոր անկիւնները և գրգռում են մեր ամբողջ օրգանիզմը: Հասկանալի է, որ յարաւոր գրգռումը պիտի առաջացնի ամբողջ կազմուածքի վնասումն և նոյն իսկ կործանումն: Երկաւորացե՛ք, որ մի օրգան, օրինակ, ստամոք-սը, անպաղար գրգռման մէջ է չէ՞ որ վերջի վերջոյ նա կը հիւանդանայ: Այսպէս էլ լինում է,—սովորապէս խմիչքներ ի չար գործ դնողնե-րը վերջ ի վերջոյ հիւանդացնում են իրանց բո-լոր օրգանները: Արհօժօր մի թոյն է, ինչպէս բոլոր թոյնները. նա որոշված քանակութեամբ օգտուել է, իսկ աւելի մեծ քանակութեամբ թունաւորում է մարդուն: Սուր արեւեցումն (գինովանալը) ոչ այլ ինչ է, եթէ ոչ սուր թու-նաւորումն: Հարկ չը կայ նկարագրել՝ արքած մարդու դարչելի պատկերը, նա ամենքին յայտ-նի է: Զը կայ ոչինչ աւելի դաղերի, քան տես-նել մի բանական մարդու, որին մեղաւորութիւն նսեմացնում է, հաւասարեցնելով անասունի: Ա-մերկական հնդկները օդին ձկնակի ջուրը

քանի որ նրանք իրանց անձնական թղթակցու-թիւնները կարողանում են ստանալ իրանց կար-գադրութեան տակ գտնված միջոցներէն: Եւ իր լրագիրներն ու նամակները ստանալու համար, սովորված է 40—60 վերստ ճանապարհ կտրել մինչև Արդվին և 7 կօպ. մարկայից դատ մի քանի բուրբի էլ ճանապարհորդութեան համար ծախսել...

Այս տխուր դրութեան մէջ՝ իրաւամբ թէ ար-դանուշցիները և թէ բովանդակ գաւառի հա-յեաքը— ուղղված է մեր նոր գաւառապետ պ. Շուքրիսկու վրա, որ չը նայելով իր կարճատև պաշտօնավարութեան, արդէն հասարակութեան յարգանքն ու վստահութիւնը աշուղած է դրաւել: Յոյս ունենք, որ պ. Շուքրիսկին՝ իր եռանդուն գործունէութեամբ, վերջ կը դնէ վերս յիշված անկարգ վիճակին:

Կ. Տ.

ՆԱՄԱԿ ԻՄԲԱՐՈՒԹԵԱՆ

Մարտի 10-ին

Բայ նա մակ Խ. Մալուսեանին: Ես, որ չեմ հեռուել եմ «Մշակին» և ակտը-ժակով կարում եմ ձեր «Օրէցօր» վերնագրով գրվածները, որոնք դիւթիզ կերպով ինձ վրա խորը տպաւորութիւն են թողնում իրանց բազմ-իմաստութեամբ, չեմ կարող նոյնը յայտնել և «Մշակի» № 36-ի մէջ տպված յօդուածի վերա-բերմամբ, որով «Գիտելիքներ» մարդուն քահանայ լինելու խորհուրդ չէք տալիս: «Մշակին» իր ամ-բողջ ընթացքում միշտ մարակիւ, հարուածել է տղիտղիւնը և խաւարը. իսկ այսօր իր մի արժանաւոր աշխատակցի բերանով կարծէք ա-սում լինի՝ «ուսում առած մարդուն չը պէտք է քահանայ ձեռնադրել, աւելի լաւ է տղէտը տը-գէտին առաջնորդէ...»:

Եթէ մենք նայելու լինենք միայն «արժանա-ւորներին վարձատրելու» տեսակետից, այդ մեզ ոչ կը տանէր: Եթէ արժանաւորների տոկոսը հալածանքները մեզ ևս ստիպում պատճառել, այն ժամանակ ոչ որ պէտք է ժողովուրդին չը ծառայէր: Միթէ մեր արժանաւոր ներուստիւն-ները, Վանդ, Սահակ, Մեարոյ, Ներսէս, Արիս-տակ, Կովորեան, Խօյապետ, և այլք «աշխա-ծանքներին» չեն յաղթել. միթէ դրանք դադա-փարին դաւաճանեցին. միթէ լուսամիտ սկզբունք-ները ոտնակոխ արին և միթէ իւրաքանչիւրը իրովանի չէ մատուցել իր ծառայութիւնը ժո-ղովրդին, որը փառ վայն ազաւակել. «ի խնչ հան դղա»: Երբեք մեզ չը պէտք է վստահեցն-այժմեան» ժամանակը, որովհետև այժմեանին յայտնում է վաղը,—յետոյ իր յաղթանակով:

Ամենին համաժողովին ձեր կարծիքն չեմ կարող ուրեմն ինչ անեն այն, թէ և քիչ թուով, ուսում առած քահանաները, որոնք թէ «խորթ որդի» են և թէ վառված՝ ծառայում են ժո-ղովրդին: Ես, աւարտելով Ներսիսեան դպրոցը, ձեռնադրվելիք քահանայ: Եւ ինչ, եթէ մի գա-ղափարակից ընկեր քահանայ ունենայի, բոլոր-վին կերպարանափոխութիւն կը մտնէր այն դիւ-ղում, ուր ես եմ ծառայում. նոյն իսկ շատ ար-գելներն անգամ լինելով մեր գիւղը իր առա-ջադիմութեամբ, իր տնտեսական բարեփոխու-թեամբ չըբնակ պիտի օրինակ է լինում... «Տղէտ, անբարոյական... քահանաները արժա-նանում են ընծաների, մեծ մեծ ծուխերի, իսկ արժանաւորները հալածվում են», ասում էք դուք: Ե՛րբ տեսաք արժանաւորը պաշտելիս,—բացա-ռութիւններ մասին չէ խօսքը,—ընդհակառակը, արժանաւորը հալածվելով, խաչվելով յաղթա-նակ տարել է և անմահացրել իր անունը: Ո՛վ

էին անուանում: Եւ ճշմարիտ որ նա այլում է մարդու մարմինը:

Սակայն պատահական արեւեցողութիւնը, որքան էլ դարձել է լինեն նրա արտայայտութիւնները, շատ չէ վնասում մեզ: Թոյնը արագ դուրս է մղվում օրգանիզմից չնչառութեամբ, մէկ միջո-ցով և մարմինը ազատվում է նրանից: Արեւ-ցողութեան կորստաբեր հեռանքները նկատվում են այնպիսիների վրա, որոնք խոնք արհեստ չեն չինել իրանց համար: Մշակական խմորների թու-նաւորումն լինում է դանդաղ, բայց հաստատ կերպով, և սրա համար հարկ չը կայ, որ նրանք անպատճառ արքած դրութեան հասնեն ամեն օր: Այ: Բաւական է, որ մեզ համար գինի, արալի գործածութիւնը մի սովորութիւն դարձած լինի, և նրանց քանակութիւնը աւելի լինի այն չափից, որը օրգանիզմը ընդունակ է կրելու: Եւ ինչը կա-մաց-կամաց իր աւելի ազդեցութիւնը կունենայ: Տարիներ ընթացքում այդպիսիների գործարան-ները և ամբողջ կազմուածքը քայքայման են հասնում: Սա մի ընդհանուր հիւանդութիւն է, որը գիտութեան մէջ յայտնի է արհօժօրով և ուսումով:

Կայ արեւօք մի որոշ չափ արալի, գինու և այլն, որը կարելի լինել ևս ուղղապապ հակա-կամ անտարբեր չափ համարել: Անկարելի է այդպիսի մի չափ որոշել. նա կախված է իւր միջոցի յատկութիւնից, անհատի կազմուածքից, նրա գործարանների առողջական դրութիւնից, անողից և այլն:

(Կը շարունակվի)

կը մոռանայ անմահ Գրիգոր Արքեպիսկոպոսը, որին տոգէտ կը կոչէին և, աւանդապահ «ջօջերը» հարածե-
րով հարածում էին... Ո՛վ կը մոռանայ երկաթե-
նի խորհրդանշանին, ով կը մոռանայ Ո՛վ հաւատացի-
ն լուսամտի տակ հեղինակին, որ ապագայի յուսով լուս-
ու մոռնոյ ծառայում է, որ քանակապէս տգէտ
դասակարգի օր աւուր վերջնաւորն է տեսնում
աւետարանի արեգակը պայծառ ծառայողներին
լուսով: Ստեփանն եպիսկոպոսին, ազգին և գը-
րակաւորութեան մատուցած ծառայութեան փո-
խարէն միթէ պէտք էր կուրծքը զարդարել մեծ-
մեծ նշաններով: Նա հարածվում է—տարածվելու
համար... Որքան էլ «խորթ որդի» համարվեն
ուսումնաւորած քանոնները, այնու ամենայնի-
չը պիտի վատկեն: Երկարամեայ անձնական
գործերն ցոյց են տալի, որ ներկայի հարածան-
քը աւելի խիստն է դաւանում և առաջ մղում
գէշ պիլ ժողովրդին տգիտութիւնից հանելու գոր-
ծը: Խորհուրդը կը տա մեզ զինով ինտելիգենտ—
երկրասարգին շտապել ձեռնարկել քանակա-
կրան հրակիրով մեծ գիւղի վրայ, և առաջադէմ
զարգացումներ դաւանել տալ տգէտ ամբողջին,
որ միշտ կարօտ է և պէտք ունի զարգացած և
ուսումնական քանակապէս: Բաճանայ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 18-ին

Ուղիղ մի տարի առաջ «Մշակի» մէջ տպւած իմ
մի նամակով խնդրում էի, որ իմ տարազի եղբայր-
ները՝ թշուառ զաղթականները ինչ նոյնը պէտք
կամ օրինակաւորութիւն և ունենան՝ համար-
ձակ դիմեն ինձ: Անցաւ երկու օր և նորանք ըս-
կեցին դիմել ինձ և դիմում էին մինչև օրս: Թէ
մինչև որ ասորիս հաւատարմի միացել են հրա-
պարակով արած խոտորանի՝ այդ, անշուշտ,
յայտնի կը լինի այն 400-ի չափ՝ հազար մի-
թաւորութեան կարօտ զօրացումներն, որոնք ա-
պաստանած են Նախմանանի և Բէկարեանի
շինութիւնների մէջ:

Այդ ստանձնած լինելով մեր ընտանիքի երե-
րորդ մասի գործակալութեան պաշտօնը՝ ստիպ-
ւած եմ հրաժարելով վշտահար սրտից սփոխող
այդ սրբազան պաշտօնից: Սակայն սրա հետ
միասին ուրախութեամբ յայտնում եմ, որ նոյն
պարտաւորութիւնը ամենայն պատրաստակա-
նութեամբ յանձն է առնում շարունակել էջ
միաձնեցող ս. Գեորգ եկեղեցու միաբան Վեռնի
քան: Մամիկոնեանց:

Էմմանուէլ քան. Նազարեանց
ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք պարտաւորութիւն ենք համարում շեշ-
տել Խաչատուր Աբովեանի մահին 50-ամեայ
տարեդարձի վրա, որ լրանում է ապրիլին, և
որի մասին յիշւած է «Մշակի» մէջ: Առանց որ
և է յարգանքի նշանի անցկացնել հայոց տա-
ղանդաւոր և անդրանիկ գրողի 50-ամեակը,—չէ
կարելի, և դա, կարծում ենք, շատ հասկանալի
է մեր հասարակութեան բոլոր շրջանների հա-
մար: Մտնում է միայն մշակել և որոշել, թէ ինչ
կերպով և ինչ եղանակով պէտք է արդարացնել
այդ յարգանքը դէպի «Վեքը Հայաստանի» ան-
մոռանալի հեղինակը:

Վերջին ժամանակները նկատուած է, որ ար-
տասանմանում բոլորն մի յայտնի չափով կորց-
րել է իր հանգիստ տրամադրութիւնը և թղթե-
րի գինը ենթարկւում են մեծ փոփոխութիւն-
ներ: Մեր պետութեան արժեթղթերի մի մասի
կուրսը պակասել է: Փողարական աշխարհում
սուր դէպքեր և ընդհանրապէս տեղի չեն ունե-
ցել, բայց ժողովել է թիւրիմացութիւնների մի
մեծ կոթ: Պետութիւնները այս անգամ էլ աշխա-
տում են իրանցից հեռացնել այնպիսի բարդու-
թիւններ, որոնք կարող են վերջնապէս ընդհա-
րուակներով:

Մի շարք օպերային ներկայացումներ, որոնց
մէջ ամենակցում էին երգչուհիներ Մօստի Բրու-
նի և Հուգենտ, գրաւեցին մեր երաժշտասէր հա-
տարակութիւնը դէպի թատրոն: Տիկին Մօստի
Բրունի դարձեալ բեմ դուրս եկաւ «Միսիօն»,
«Փափօր» և «Գիւղական պատիւ» պիեսներում
և ապացուցեց, որ նա բարեխիղճ դերասանուհի
է: Հուգենտ դուրս է իր թէն ոչ ընդարձակ և
բարձր, սակայն գեղեցիկ, մաքուր ձայնով, բայց
մաթիւ գեղեցիկներով և զայալլկներով: Իսկ
Մօստի Բրունի—իր մոտձված և զգացված
խորով, ձայնի համապատասխան փոփոխութիւն-
ներով և դրամատիկական բնավորութեամբ: Ա-
ռաջինը սառն է իրեն մի գեղեցիկ երգող սո-
լան, երկրորդը զգացմունք է ու կիրք, և չէ կա-
րող գոհացնել առաջնակարգ ձայնի երկրպագու-
ներին: Մօստի Բրունի խաղում է Ֆերմօ քա-
ղաքաց, սովորել է Բօսսիսիի հայրենիքում, Պէշ-
տարջում, ուր հիմնված է ի պատիւ նշանաւոր
երաժիշտ կօմպոզիտորի: Մօստի Բրունի
երգել է նախ Նէպոլում, ապա Նիկոպոլում, Սթե-
ֆանբում, Կ. Պոլսում և Օդեսայում: Նա ա-
նող երգում է «Միսիօն», «Վերդա», «Ջիլօֆօրա»,
«Մարգարէ» և «Մամօն ու Դալիա» օպերանե-
րում:

Պ. Վելիչկօ շարունակում է կուռք քանդակ
ընդհանրապէս դէմ իրան յատուկ ձևերով: Իր լրա-
գրի երէկվայ համարում մեծապատիւ խմբագրի-
րը, հրճուածք երեւին, աւետում է, որ «Նոյնը
իշխանութեան պաշտօնական գրադրութիւնը»
ամբողջապէս հաստատում է «KABKAZ» լրագրի
թղթակցութեան հաղորդածը՝ «Միսիօնի հարցի»
մասին: Իսկ այդ «հարցը» պ. Վելիչկօյի երեւ-
կայութեամբ՝ «Հայկական ցոյցերի» և «Հայկական
ֆանատիկոսութեան» բռնկումն է ընդդէմ ուղ-
ղաբառ եկեղեցու: Մեղ շատ տարօրինակ է թը-
ւում այն, որ ինչ որ նմանութիւն կայ պ. Վելիչ-
կօյի թղթակցութեան և «պաշտօնական գրադրու-
թեան» մէջ, որովհետև առաջինը, ինչպէս այդ
ապացուցված է, կատարեալապէս տեղեկացիւ է,
իսկ երկրորդը՝ այդպէս լինել չէ կարող և չը
պէտք է լինի: Զը լինի թէ պ. Վելիչկօ «պաշ-
տօնական» բառը նոյնպէս տեղեկացիւ կերպով
մէջ է բերել, միամիտներին վրա ձեռնած գործ
դնելու համար... Յամենայն դէպս «Միսիօնի
դէպքը» (?) հայկական ցոյց չէ, ինչպէս, օ-
րինակ, պ. Վելիչկօյի անձնական հայատեացու-
թիւնը ուսուց մամուլի հայատեացութեան ա-
պացուց չէ...

Երէկվայ համարում մեր հաղորդած լուրը Բա-
գրի գրեթէ բոլոր խոշոր նախնականները անգ-
լիացիներին ծախելու մասին, ճշգրտում է «Kacmի»
լրագրի հաղորդած մանրամասն տեղեկութիւն-
ներով: Բացի Թալիշից արդէն իրանց նախնա-
հանքերը ծախել են և հետեւեալ ֆիրմաները.
«Է-Բուր» 700,000 ռուբլով, Բաթումի ընկե-
րութիւնը՝ 150,000 ռ., Երեւանի՝ 4,600,000 ռ.:
Իսկ ծախելու առաջարկութիւնները, բացի Ման-
թաշեանից, եղել են Բիւրկուն՝ 3 1/2 միլիօն, Բու-
րաղեանների—4 1/2 միլիօն, Բեկինդորֆին—3
միլիօն, «Մարիս» ընկերութեան—1 1/2 միլիօն:

Վերջին հինգ տարիների ընթացքում, մայրա-
քաղաքի լրագիրների խօսքով, Ռուսաստանի
բոլոր թիւներում ընդել են ապահարդանի 4766
գործեր:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ
դատաստանական ընթացքների յանձնաժողովը
հետեւեալ փոփոխութիւններն է մշակել այժմեան
դատաստանական կազմի համար: Իւրաքանչիւր
նոր սկսող իրաւաբան պարտաւոր է դատաստա-
նական պաշտօնների կանդիդատ մնալ, ապա
դատարանի ընդիլ յանձնաժողովի առաջ պէտք
է ընտրութիւն տալ առաջ կանդիդատներ կոչում
ստանալու համար, որից յետոյ նա կարող է
պաշտօն ստանալ դատարանում: Առանց առաջ
կանդիդատի կոչումի դատարանների պաշտօն կա-
րող են ստանալ միայն այն երգուեալ հաւատար-
մատարներ և իրաւագիտութեան պրօֆէսորները,
որոնք այդ կոչումի մէջ մնացել են ամենաբնիկ
վից տարի: Նախագիծը յայտնի ունիլ է որոշում
կանդիդատների համար և տարեկան 300 ռ.
նպաստ: Մտադրութիւն կայ մօտաւորապէս հե-
տեւեալ ունիլները տալ. սենատորին—8,000 ռ.,
պալատի անդամներին—4,500 ռ., նախնական
դատարանի անդամներին—3,000 ռ., հաշտարար
դատարաններին—2,400 ռ.:

«Варш. Дневник» լրագիրը հաղորդում է, որ
այս օրերս վարձանակից լեհացի նշանաւոր վի-
պասաններից մէկը՝ Կլեմէնս Իւնօշա (Շանեւսկի):
Բաթումից հաղորդում են «Новое Обозрение»
լրագիրն. «Այստեղ լուր տալով, որ թիւրք
աւազակներին մի խումբ անցել է մեր սահմանը
Արդվինի մօտ և այդտեղ բռնկութիւններ է գոր-
ծել հայերի դէմ: Սահմանապահ պատու ուս-
ղակները անտարբեր չը մնացին, այժմ խաղա-
ղութիւն է»:

ԲԱԹՈՒՄԻՅՑ մեղ գրում են. «Բաթումի Փոխա-
ղարձ վարկի ընկերութիւնն էլ առաջարկու-
թիւն է ստացել որ և է նպաստ յատկացնել
Թիֆլիսում բացվելի պոլիտեխնիկումին: Ընկերու-
թեան վարչութիւնը, նկատի առնելով գործի
բարի նպատակը, այդ հարցը կառավարի
անդամների ընդհանուր ժողովին, որ կը կայա-
նայ մարտի 22-ին: Բաթումի փոխաղարձ վարկի
ընկերութիւնը ընդամենը երեք տարի է, որ հիմն-
վել է: Նա առ այժմ այնքան մեծ ոյծ չունի,
որ մի աչքի ընկնող գումար նուիրի ևս մի ընկերու-
թիւնին: Բայց և այնպէս, աչքի առաջ ունե-
նալով մի այդպիսի բարձր նպատակ, որպիսին է
Կոմկասում բարձրագոյն դպրոցի բանալը, ընդ-
հանուր ժողովը, անշուշտ, կը վճռէ որ ընկերու-
թիւնն իր լուծման խառնի հաւաքովի գումարն
հետ: Մեր քաղաքային դոման, ինչպէս գիտէք,
վճռեց յատկացնել պոլիտեխնիկումին տարեկան
2,000 ռուբլի, այդ պատճառով նա ենթարկվեց
մեր հասարակութեան մի որոշ մասի և տեղա-

կան լրագրի ամենախիստ յարձակումներին: Մա-
նաւոր տեղական թերթը իր հայհայտներով
և բուլվարային տոնով բոլորովին անտանելի
դարձաւ: Բայց, միթէ ուշադրութեան արժանի
են դրանք»:

ԱԲԱԼՔԱԼԱԲԻՅ մեղ գրում են. «Մեր գաւա-
ռում ձմեռը այս տարի շուտ սկսվեց, բայց ե-
րեւում է, որ շուտ էլ պիտի վերջանայ: Թէն
փետրվարի առաջին կէսի տաք եղանակներից
յետոյ կրկին մի երկու-երեք շաբաթ ցուրտ էր,
բայց հիմա եղանակը համարեա զարմանալին է.
հարցը վաղուց սկսվել է և շատ տեղեր ձիւնից
ազատված դաշտերը ծածկվել են ձնածաղիկով:
Մի քանի տեղեր արդէն սկսվում է դարնան վար
ու ցանքը: Մարտին վարուցանք սկսելը մեր
սարահարկում, առհասարակ, աշողութիւն է
համարվում, եթէ միայն այլ ևս ձիւն չը գայ, և
աշխատութիւնները չը խանգարվեն»:

ԲԱԹՈՒՄԻՅՑ մեղ գրում են. «Ոչ մի տարի Բա-
թումի առևտուրը այնքան ընկած դրութեան մէջ
չէ եղել, ինչպէս այս տարի է. ընկած է, գլխաւոր-
ապէս, կէքօսինի առևտուրը: Այս տարվայ
սկզբից մինչև այժմ մի քանի գործարաններ
համարեա թէ դադարել են աշխատելուց, պատ-
ճառ այն է, որ արտասահմանից թէն շատից
բէշ պահանջ կայ, բայց շատ քիչ զին են տա-
լիս: Այդ պատճառով էլ այստեղի գործարա-
նատէրերը, տեսնելով որ առաջարկված գինը
բոլորովին ձեռնառու չէ, ստիպված են առժա-
մանակ դադարեցնել գործը մինչև գինը բարձ-
րանալ: Շնորհիւ այդ հանգամանքի, հարիւ-
րաւոր խեղճ բանտերներ մնացել են անգործ:
Երկար անգործ մնալուց բոլորովին թշուառու-
թեան են մատնվել, գրգռումների վերջին կօպէկը
սպառված է, և այժմ ստիպված, տան կանկարա-
ւիքներն են ծախում, որպէս զի մի կերպ կարո-
ղանա կառավարվել: Շատերը անգործ լինելով,
ցանկանում են գործ վերադառնալ հայրենիք,
բայց ինչպէս դնան, չէ որ փող է հարկաւոր
ձանապարհորդութեան համար»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՅՐԻՔԱՆԸ ԲԱՒԱԿԱՆ ԶԷ

Կ. Պօլից գրում են, որ օսմանիս կառավա-
րութիւնը ամենապէս կերպով փափագում է, որ
գործերը հեռաւոր Արեւելքում կլանեն մեծ պե-
տութիւնների ուշադրութիւնը և շատ ուրախ է
այժմ, որ այդ գործերը կնճռալից կերպարանք
են ստանում: Եւ ձեռնարկու, բախտը նորից ժող-
տում է սուլվան Աբովի Համիդին և նրա մըթ-
նացած աստղը նորից փայլում է այն քօպէնի,
երբ կրեական հարցը, Ռուսաստանի պահանջ-
ները, Մակեդոնիայի ապստամբական շարժում-
ները, Հայաստանի և Ոսկերիում կատարված
և կատարվող նոր գաղանթութիւնները, կոտորած-
ների դէմ եղած բողոքները նեղ դրութեան մէջ
են դրել թիւրքաց կառավարութիւնը: Այդ տագ-
նալիների մէջ հեռաւոր Արեւելքի դէպքերը նրան
օգնութեան են հասնում. մեծ պետութիւնները ի-
րանց ուշադրութիւնը դարձրել են այդ կողմը և առ-
այժմ չեն նեղի Թիւրքիային, և նա կարող է լուե-
րեայի, հանդարտ առաջ տանել իր ծրագիրները:
Արեւելքում հարցն ևս շուտով լուծելու հարկ չը կայ.
Աստորիան և Գերմանիան յետ կանչելով իրանց
զորքերը Կրեւելից, գաղտնի խախտում են
սուլվանին զիջել: Արդէն աւստրիական կի-
նապաշտօնական «Fremdenblatt» լրագիրը
շտապեց յայտնել, թէ կրեական հարցի լուծու-
մը չէ կարող շուտով տեղի ունենալ, որովհետև
մեծ պետութիւնների մէջ դեռ մինչև այսօր հա-
մաձայնութիւն չէ կայացել, ամենաւանդ նախա-
գապիտի խնդրի մասին: Բայց ով է մեղաւոր,
որ մեծ պետութիւնների մէջ համաձայնութիւն
չը կայ. ի հարկէ, ոչ Ռուսաստանը, ոչ Անգլիան
և ոչ Ֆրանսիան: Այդ երեք պետութիւնները
հաստատ և միաբան կերպով պնդում են Գէօրգի
իշխանի ընտրութեան վրա. Իտալիան նոյնպէս
ստեղ է իր համաձայնութիւնը. միում են միայն
Աստորիան և Գերմանիան, որոնց յամառութիւ-
նը և յետաձգում է կրեական հարցի լուծումը:
Եւ թէն աւստրիական և գերմանական պետու-
թիւնները շարունակ յայտնում են, որ իրանք
չեն թողել եւրօպական կոնցէրտը, որ չա՛հ չու-
նեն կրեական խնդրում, բայց պարզ է, որ
հրաժարվելով Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգ-
լիայի հետ միաբան գործելուց, նրանք անդամա-
նուծում են այդ պետութիւնների շահերը և
լուս խախտում են կարծիք սուլվանին:
Իսկ մինչև այդ, թշուառ Կրեւելի արեւաբաժն է
լինում բաշխուղութիւնի գաղափարներից և
սովից. մինչև այդ նախառակ Հայաստանը դուր
սպասում է որ և է դարձան և թեթեւութիւն:

Թիւրքաց կառավարութիւնը ազատ չնշում է և
ամենայն լրջութեամբ առաջ է տանում իր աւե-
րիչ և յանցաւոր քաղաքականութիւնը քրիստո-
նեաների վերաբերմամբ: Մի և նոյն ժամանակ
Գերմանիան հայկալիւն է նրան զէնքի և պա-
տերազմական նիւթերի անաղին քանակութիւն,
նիւթեր, որոնք պատրաստվում են գերմանական
զինագործարաններում:

Եւ ինչ պատրուակ են բերում Գերմանիան ու
Աստորիան. նրանք վախենում են, որ Կրեւելն
չը միացնի Յունաստանի հետ, բայց մոռանում
են, որ դեռ 1881 թիւն իշխան Բիսմարկ խոր-
հուրդ էր տալիս Կրեւելն Յունաստանին տալ:
Գերմանիայի և Աստորիայի այդ անարժան և
անաղին քաղաքականութիւնը առիթ է տալիս
անգլիական և ուսումնական ցանկութիւն յայտ-
նել, որ Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան,
Խաղաղի օգնութեամբ, իրանք լուծեն կրեա-
կան հարցը այն հիման վրայ, որ անկախ Յու-
նաստան ստեղծող վերոյիշեալ երեք պետու-
թիւններն են եղել, ուստի և նրանք էլ բարոյա-
պէս պարտաւոր են հոգ տանել և երկրի
պահպանութեան և բարգաւաճման համար, որ
անկարելի է, մինչև որ չը լուծվի կրեական
հարցը:

Այդքանը Կրեւելի համար: Բայց քանի հարցեր
կան, որոնք նոյնպէս սպասում են լուծման և
որոնց վերաբերմամբ բարեացակամ պետութիւն-
ները չեն կարող միջամտութեան մի այնպիսի
իրաւունք ձեռք բերել, որը այժմ առաջարկում են
լրագիրները: Ո՛չ, խաղաղութեան և արդարու-
թեան գործը առաջ տանելու համար բարեացա-
կամ պետութիւնները չը պիտի ականջ դնեն
Աստորիայում և Գերմանիայում երգող յուզա-
պարկներին:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՈՒՄՍԱՆԻՅ

Թաւրիզ, մարտի 8-ին

Մարտի 8-ին, բողոքականների օրորողաց դըպ-
րոցում տեղի ունեցաւ Լոսանական ընկերու-
թեան մի դասախօսութիւն. նիւթը Վենետիկ
քաղաքն էր, դասախօսը՝ տիկին Ուիլսոն: Պէտք
է ասել, որ առաջին անգամն է, որ մենք լուսով
ենք Թաւրիզում կնոջ դասախօսութիւն: Երեկոյն
սկսվեց մի հալերէն երգով, երգում էին դպրոցի
աշակերտուհիները դաշնամուրի ներդաշնակու-
թեամբ, նուագում էր մի վարժուհի: Տիկին Ուիլ-
սոնը խօսեց Վենետիկի անցեալի և ներկայի
մասին, շատ գեղեցիկ կերպով նկարագրեց Վե-
նետիկի քաղաքական, վարչական և արուեստա-
գիտական վիճակը, երկար խօսեց նրա հոյա-
կապ շէնքերի և գեղեցիկ արուեստների վրա:
Ունիւղիքները զո՛ւ սրտով հեռացան: Մեղ այն-
քան չէր զարմացում տիկնոջ գեղեցիկ նկարա-
գրութիւնը, որքան նրա մաքուր և վարժ հայե-
րէն խօսելը: Համարելի է՝ տիկնոջ գործունէու-
թիւնը: Նա է եղել «Լոյս» ընկերութեան հիմնա-
դիրներից մէկը: Ար.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բօլքարական կառավարութեան և Բ. Դրան
մէջ ծագած տարաձայնութիւններից մէկն էլ Կ.
Պօլի բողոքական էկզարխարանի «Նօվինի»
լրագրի խմբագիր Մակեդոնսկու սպանութեան
գործն է: Մի քանի ժամանակ առաջ, ինչպէս
յայտնի է հեռագիրներից, Մակեդոնսկի սպան-
վեց իր բնակարանում ատրճանակի հարուած-
ներով: Մարդասպանը թէն դեռ բռնկում չէ,
բայց յայտնի է. նա Նիկի անունով մի մակե-
դոնացի է: «Նօվինի» լրագրում մի յօդուած էր
տպվել, որի մէջ այն միտքն էր արձարվում,
թէ Թիւրքիան իրաւունք ունի պատժել յեղա-
փոխականներին իր տէրութեան մէջ: Նիկի մի
օր դալիս է Մակեդոնսկու մօտ և պահանջում, որ
նա լրագրի մէջ հեղքի պղծ հայեացքը, խմբա-
գիրը մերժում է և Նիկի մարտնակի հար-
ւածներով տեղիւնուող սպանում է նրան:

—Եւրօպական և մասնաւոր Պարիզի մի քանի
լրագիրներ կասկած էին յայտնել թէ Ֆրանսիայի
և Ռուսաստանի մէջ կատարեալ համաձայնու-
թիւն կայ ոչ միայն ծայրագոյն Արեւելքի, այլ և
եւրօպական շատ գործերի վերաբերմամբ: «Nord»
լրագիրը պարտաւորութիւն է համարում յայտ-
նել, թէ Եւրօպայում և աշխարհի միւս մասե-
րում եղած քաղաքական հարցերի վերաբերմամբ
կատարեալ համաձայնութիւն է տիրում Ռուսաս-
տանի և Ֆրանսիայի մէջ:

—Ապստամբութիւնը Հնդկաստանում անգլիա-
ցիների դէմ, ինչպէս երևում է, վերջնապէս
վրա է. Ինդիեր գործակալութեան հեռագրում
են Կալկուտայից. «Կոլկուտ-Վէլի» և Կամբար-Վէլի
ուղարկեցին 70 պատանդ, կատարելով իրանց
առաջարկած պայմանները: Շնորհիւ այդ հան-
գամանքի, պատերազմը Հնդկաստանի սահմանա-
գիտում իրապէս վերջացել է: Կոլկուտ և Կամբար
աֆրիկեան երկու ցեղերի պետերն են:

—«Frankf. Zeitung» գերմանական լրագիր
հեռագրում են Կ. Պ

Типографія Грузинськ. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13